Հաստատված է

«Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի

25 օգոստոս 2014թ. նիստում

Ռեկտոր՝ Ս. Ա. Սեդրակյան

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի գործունեության

կարգ

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կաառվարման խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի ձևավորումը

1. Խորհուրդը ձևավորվում է հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և հիմնադրի ներկայացուցիչներից:
2. Խորհրդի անդամների թիվը /ոչ պակաս, քան 10 և ոչ ավելի, քան 20/ սահմանում է հաստատության հիմնադիրը /այսուհետ՝ հիմնադիր/ հաստատության կանոնադրությամբ:
3. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում հաստատության կառուցվածքային միավորները՝

   ա/ համալսարանի կառուցվածքային միավորի կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել հաստատության ցանկացած աշխատող,

   բ/ համալսարանի կառուցվածքային միավորներից առաջադրված անձանց թեկնածություններն ընտրվում են հաստատության գիտական խորհրդում և ներկայացվում հիմնադիրին:

   գ/ պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

4. Համալսարանի ուսանողության ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ուսանողական խորհուրդը /ՈՒԽ/ կամ ուսանողական գիտական ընկերությունը /ՈՒԳԸ/ հիմնադրի ընտրությամբ:

   ա/ ուսանողների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմության և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ցանկացած ուսանող:

   բ/ Հաստատության ՈՒԽ-ն կամ ՈՒԳԸ-ն ընտրում է ֆակուլտետից առաջադրված ուսանողների թեկնածությունները և ներկայացնում լիազոր մարմնին:

   գ/ Ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

5. Հիմնադիրը խորհրդի անդամներ է առաջադրում կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներից, ինչպես նաև ճանաչված գործատուներից /խորհրդի կազմի 50 տոկոսը/:
6. Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա հիմնադիրը հաստատում է խորհրդի կազմը:
7. Խորհուրդն իր կազմից /բացի ուսանողության ներկայացուցիչներից /ընտրում է նախագահ: Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատող /դեկան, ամբիոնի վարիչ, դասախոս/: Խորհրդի նախագահը նույն բուհում պահպանում է ժամավճարի սկզբունքով դասախոսելու իրավունքը:
8. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել՝

   ա/ իր դիմումի համաձայն,

   բ/ խորհրդի անդամի անգործության հիմնավորմամբ կամ մահվան պատճառով,

   գ/ խորհրդի անդամի թեկնածությունն առաջադրող մարմնի աջակցությամբ,

   դ/ ըստ պաշտոնի առաջադրվելու դեպքում՝ պաշտոնից ազատվելու հետևանքով,

   ե/ որպես ուսանող առաջադրվելու դեպքում՝ ուսանողի կարգավիճակը կորցնելու հետևանքով,

9. Խորհրդի անդամի լիազորությունները խորհրդի առնվազն 50%-ի ներկայությամբ կարող է դադարեցվել հիմնադրի կողմից:
10. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է սույն կետի 4-7 ենթակետերի պահանջներին համապատասխան:

11. Խորհրդի անգործության դեպքում հիմնադիրը կարող է վաղաժամկետ դադարեցնել խորհրդի լիազորությունները կամ լուծարել խորհուրդը:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի աշխատակարգը

Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգը սահմանում է ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի նախագահի, քարտուղարի և անդամների իրավասությունները, նիստերի նախապատրաստման, գումարման, անցկացման, քվեարկության, նիստերի արձանագրման, որոշումների ընդունման կարգը:
2. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի աշխատակարգը հաստատում է ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհուրդը:
3. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի աշխատակիցների հետ կապված ծախսերը կատարվում են համալսարանի միջոցների հաշվին:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի կառուցվածքը և իրավասությունները

1. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ համալսարանի կանոնադրության համաձայն:
2. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհուրդն ունի նախագահ և քարտուղար:

   Ըստ անհրաժեշտության, կառավարման խորհուրդը ձևավորում է ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր, որոնք ուսումնասիրում են առաջադրված հարցերը, պատրաստում նախագծեր և դրանք ներկայացնում խորհրդին:

3. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհուրդը ձևավորվելուց հետո իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Կառավարման խորհրդի նախագահը չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատող կամ սովորող:
4. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհուրդը՝

ա/ քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն,

բ/ հաստատում է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրերը,

գ/ լսում և գնահատում է համալսարանի տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը,

դ/ քննարկում և սահմանված կարգով հիմնադրին է ներկայացնում ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կանոնադրությունը կամ դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկությունները,

ե/ հաստատում է իր աշխատակարգը, ռեկտորի ընտրության ընթացակարգը,

5. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի քարտուղարը՝

ա/ ծանուցում է խորհրդի անդամներին նիստի օրվա, տեղի և օրակարգի մասին,

բ/ գրանցում է նիստին մասնակցող խորհրդի անդամներին,

գ/ կազմում և ստորագրում է խորհրդի նիստի արձանագրությունները,

դ/ կատարում է սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի նիստերի գումարումը

1. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերի նախապատրաստումը իրականացնում են խորհրդի նախագահը և քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում այդ աշխատանքներին ներգրավելով խորհրդի մյուս անդամներին:
2. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի նիստը իրավասու է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցության դեպքում:
3. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի առաջին նիստը մինչև նախագահի ընտրությունը, նախագահում է տարիքով ավագ անդամը, քարտուղարի պարտականությունները կատարում է խորհրդի կրտսեր անդամը:

4. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի իրավասությունն իրականացվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:
5. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի հերթական նիստերը գումարվում են առնվազն տարին մեկ անգամ, նրա նախագահի կողմից:
6. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության նրա նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև հիմնադրի, համալսարանի ռեկտորի, ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի խորհրդի կամ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով:
7. Հիմնադրի, համալսարանի ռեկտորի, ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով, նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:
8. Խորհրդի անդամներին նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին խորհրդի քարտուղարը տեղեկացնում է ամենաուշը 5 օր առաջ, գրավոր ծանուցմամբ:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի արտահերթ նիստերի գումարման կարգ

1. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի արտահերթ նիստ գումարելու խորհրդի նախագահին ներկայացված գրավոր պահանջը պետք է պարունակի խորհրդի օրակարգում առաջարկվող հարցերը, արտահերթ նիստը պահանջող խորհրդի անդամների կամ ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի գիտական խորհրդի անդամների ստորագրությունները:
2. Հիմնադրի, ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի ռեկտորի, համալսարանի կառավարման խորհրդի և գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի գրավոր պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի նախագահը պետք է ընդունի համալսարանի կառավարման խորհրդի նիստ գումարելու մասին որոշումը:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի նիստերի քվեակազմը

1. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է խորհրդի քարտուղարը՝ նիստը սկսելուց առաջ: Քվեակազմը չապահովելու դեպքում նախագահի որոշմամբ կարող է երկարաձգվել գրանցումը մինչև քվեակազմի ապահովումը, կամ հետաձգել նիստը:
2. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվում է ընդհանուր կարգով:
3. Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը որոշում է խորհուրդը:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի նիստերի անցկացման ընթացակարգ

1. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի նախագահը, բացելով ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի խորհրդի նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության է դնում օրակարգը:
2. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:
3. Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը որոշում է խորհուրդը:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդում քվեարկության կարգը

1. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ

մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կանոնադրությամբ, սույն աշխատակարգով կամ խորհրդի որոշմամբ քվեարկության այլ կարգ չի սահմանվել:

2. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհուրդը կարող է ընդունել որոշում, փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու համար:
3. Փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկները պատրաստվում են ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի քարտուղարի կողմից:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի հանձնաժողովը

1. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է խորհուրդը:
2. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք, և այդ մասին տեղյակ պահել <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդին:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի արձանագրությունը

1. ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի արձանագրությունը 2 օրինակով կազմում է ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի քարտուղարը խորհրդի նիստը ավարտելուց հետո 3 օրվա ընթացքում: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:
2. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, քվեակազմը, նախագահի և քարտուղարի անուն-ազգանունները, օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները:

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի որոշումները

ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի կառավարման խորհրդի որոշումները կենսագործվում են ԳՀՍ <<Ուրարտու>> համալսարանի ռեկտորի հրամաններով: